# Ամեն դեպքում

Մարդիկ հաճախ անխոհեմ են, անտրամաբանական եւ ինքնահավան:

... Ներեք նրանց բոլոր դեպքերում:

Եթե դուք սիրալիր եք, մարդիկ կարող են ձեզ մեղադրել անձնապաշտական, ծածուկ շարժառիթների համար:

... Ամեն դեպքում սիրալիր եղեք:

Եթե դուք հաջողակ եք, ապա դուք ձեռք կբերեք բազում կեղծ ընկերներ եւ նույնքան իսկական թշնամիներ:

...Ամեն դեպքում  ձգտեք հաջողության:

Եթե դուք ազնիվ եք եւ անկեղծ, ապա մարդիկ կարող են ձեզ խաբել:

... Ամեն դեպքում եղեք ազնիվ եւ անկեղծ:

Բարձրագույն գաղափարներով մեծագույն մարդիկ և տիկնայք կարող են գնդակահարվել փոքրագույն մտքի տեր փոքրագույն մարդկանց կամ կանանց կողմից:

...Ամեն դեպքում մտածեք բարձր բաներից:

Մարդիկ լավ են վերաբերվում ձախողվածներին, բայց հետևում են միայն հաջողակներին:

... Ամեն դեպքում պայքարեք ձախողակներից ոմանց համար:

Այն, ինչը դուք կկառուցեք տարիներ շարունակ, ինչ որ մեկը կարող է ոչնչացնել մեկ օրում:

... Ամեն դեպքում կառուցե'ք:

Եթե դուք խաղաղության եւ երջանկության եք հասնում, դրանք կարող են  նախանձելի լինել:

... Ամեն դեպքում եղեք երջանիկ:

Այն բարի գործը, որը դուք այսօր կկատարեք, մարդիկ  վաղը կմոռանան:

... Ամեն դեպքում բարին գործեք:

Աշխարհին տվեք ձեր ունեցածի լավագույն մասը, եւ հնարավոր է, որ դա բավարար չի լինի:

... Ամեն դեպքում աշխարհին տվեք ձեր ունեցածի լավագույն մասը:

Վերջին հաշվով դուք հասկանում էք, որ այս ամենը ձեր եւ Աստծո միջեւ է:

Եւ համենայն դեպս ոչ  ձեր եւ մարդկանց միջեւ:

Մայր Թերեզա

(Սույն պոեմը, որ փորագրված է Կալկաթայի իր մանկատան պատին, չի ներառում շեղատառերով գրված մասերը, որոնք Քեյթ Քենթի կողմից 1968 թվականին գրված «Արտասովոր պատվիրանների» բնագրի մասն են: )

CG 016